ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

ԿՐԵՏԵԻ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ Տ. Տ. ԻՐԵՆԻՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՐԵՏԵԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՐԱՆՈՒՄ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ՆՐԱ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ*

(6 մայիսի 2019 թ.)

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Կաթողիկոս եւ Պատրիարք Ամենայն Հայոց,

Առանձնակի ուրախությամբ եւ հարգանոք այս պահին Ձեզ ու Ձեր հարգարժան պատվիրակությանն ընդունում ենք Կրետեի արքեպիսկոպոսարանում եւ մեր սրտի խորքից արտահայտում ենք հարգանքի ու սիրո ամենաանկեղծ զգացումները։ Ձեր այս այցելությունն արդեն իսկ անջնջելի տառերով է արձանագրվում մեր տեղական Եկեղեցու պատմության մեջ։

Ձեր այս պատմական այցելությամբ՝ առաջին անգամ ոչ միայն Կրետե, այլ նաեւ Հունաստան, անշուշտ, լուսավորում եք այստեղի հայկական գաղութի Ս. Հովհաննես Կարապետ ծխական նշանավոր եկեղեցու կյանքի ու վկայության 350-ամյա տարեդարձի տոնակատարությունները։ Ս. Հովհաննես Կարապետը պարզապես հայկական եկեղեցիներից մեկը չէ. այն հայկական ամենահին տաճարն է Եւրոպայում։

Հերակլիոնում այս օրերին Ձեր ներկայությունը ուրախության աղբյուր եւ հարգանքի արտահայտություն է ոչ միայն հայկական գաղութի, այլ նաեւ ողջ Կրետեի նկատմամբ։ Բոլորս Ձեզ ընդունում եւ ողջունում ենք անկեղծ զգացումներով ու փոխըմբռնման բարի տրամադրությամբ, քանզի քաջ գիտենք, որ յուրաքանչյուր ոք՝ ըստ իր վկայության եւ առաքելության, հարգելով սեփական պատմությունն ու ավանդությունը, կարող է նպաստել առավել բարվոք պայմանների ստեղծմանը, «սիրո եւ ճշմարտության», ինչպես նաեւ ժողովուրդների, մշակույթների, դավանանքների ու դավանաբանությունների ներդաշնակ եւ անկեղծ

---

* *Հունարենից թարգմանեց Տ. Գաբրիել քհն. Վարդանյանը։*

երկխոսության ծավալմանը՝ միմյանց հանդեպ հարգանքի ու Քրիստոսով ճշմարիտ ազատության շրջանակում։

Կրետեի կիսանկախ Եկեղեցին, որը կանոնապես ենթակա եւ հաշվետու է Տիեզերական Պատրիարքությանը՝ Կ. Պոլսի Մայր Եկեղեցուն, ընդունում, վկայում ու հաստատում է Տիեզերական Պատրիարքության այս ավանդույթը եւ խոհեմաբար ծառայում է մարդկանց միջեւ ճշմարիտ համընթացության ու փոխգործակցության ձեւավորմանը։ Գիտենք նաեւ, որ այն ամենը, ինչ միավորում է մեզ, առավել շատ է, քան այն, ինչ բաժանում է մեզ։

Հանձինս Ձեզ՝ պատվում ենք ողջ Հայ Եկեղեցին, շնորհավորում ենք այստեղի հայկական գաղութին իր վկայության եւ հավատքի համար, մեր երկրին մատուցած ծառայության համար, նրա ամենօրյա ազնիվ ընթացքի համար։ Հերակլիոնի հայերն անբաժան մասնիկն ու թանկագին խճաքարն են այս երկրի եւ նրա պատմության խճանկարի։ Սա ընդունում եւ հավաստում ենք բոլորս. վստահ եմ, որ դա փաստում եք նաեւ Դուք՝ կրետացիների հետ հաղորդակցությամբ եւ Ձեր ներկայությամբ։

Հարգանքի ու սիրո այս զգացումով կրկին ողջունում ենք Ձեզ եւ խնդրում այստեղ զգալ այնպես, ինչպես Ձեր երկրում։

Նույն ուրախությամբ եւ հարգանոք ողջունում ենք նաեւ Ձեր հարգարժան պատվիրակության բոլոր անդամներին՝ հոգեւորականներին ու աշխարհիկ գործընկերներին, Հերակլիոնի հայկական գաղութի ներկայացուցիչներին։

Ամփոփելով մեր խոսքը՝ ցանկանում ենք Ձեր պաշտոնական այցելության առիթով Ձերդ Սրբությանը նվիրել արքեպիսկոպոսական մի գավազան, որը Ձեր աջակիցը կլինի հոգեւոր ծառայության եւ առաքելության մեջ։

Ձեզ ենք նվիրում նաեւ Կրետեի Եկեղեցու հրատարակությունները՝ Մեծ կղզու քրիստոնեական հուշակոթողների վերաբերյալ, ինչպես նաեւ մեր կղզու առաջին եպիսկոպոսի սուրբ Տիտոս առաքյալի սրբապատկերի ընդօրինակությունը՝ հարակից մատուռից։

Եւ դարձյալ շնորհակալ ենք Ձեր այս այցելության համար ու մաղթում ենք Ձեզ բարի կեցություն։

Երկար տարիներ Ձեզ, Ձերդ Սրբություն։